«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Բազմամասնագիտական թիմի և ծնողների համագործակցությունը ներառական կրթության համակարգում

ԱՌԱՐԿԱ Տեխնոլոգիա

ՀԵՂԻՆԱԿ Սուջյան Գայանե Լիպարիտի

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հայրենյացի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն……....3

Գլուխ 1 Բազմամասնագիտական թիմի և ծնողների համագործակցությունը ներառական կրթության համակարգում

1.1 Ներառական կրթության համակարգը ՀՀ-ում……..4

1.2 Բազմամասնագիտական թիմը և նրա գործառույթները……6

1.3 Բազմամասնագիտական թիմի և ծնողների համագործակցության ուղիները….12

Եզրակացություն……..…19

Գրականության ցնակ…….....20

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Այսօր, արդեն ողջ աշխարհում, ներառական կրթությունը համարվում է մի գործընթաց, որն անմիջապես արձագանքում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքներին՝ ներգրավելով և ընդլայնելով նրանց մասնակցությունը կրթական գործընթացում, մշակութային և համայնքային կյանքում, միաժամանակ, կանխելով նրանց՝ կրթական համակարգից դուրս մնալու խնդիրները: Բազմամասնագիտական թիմը մանկավարժների խումբ է, որոնք պետք է օգնեն երեխային հաղթահարելու ուսումնական ծրագիրը:

Համագործակցելով ծնողների հետ բազմամասնագիտական թիմը յուրաքանչյուր երեխայի համար մշակում է անհատական զարգացման պլան, հետևում և փաստաթղթավորում է երեխայի զարգացումը:

Ներառական կրթությունը, լինելով կրթության երիտասարդ համակարգ, դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն իր առջև դեռևս չլուծված խնդիրներ ունի: Դպրոցում ներառական կրթության խնդիրներից մեկն է նաև հատուկ կարիքներով երեխաների և բնականոն զարգացում ունեցող երեխաների փոխհարաբերությունների ձևավորումը և համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի և ծնողների համագործակցությունը այդ գործընթացում:

Աշխատանքի նպատակն է բացահայտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպումն բազմամասնագիտական թիմի և ծնողների համագործակցության միջոցով:

Աշխատանքի խնդիրներն են՝

1.Ուսումնասիրել ներառական կրթության համակարգը ՀՀ-ում:

2.Ուսումնասիրել բազմամասնագիտական թիմի անդամների գործառույթները:

3.Պարզել ծնողների դերը ներառական կրթության գործընթացում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, ենթագլուխներից եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը կազմում է համակարգչային շարվածքի 20 էջ:

Գլուխ 1 Բազմամասնագիտական թիմի և ծնողների համագործակցությունը ներառական կրթության համակարգում

1.1 Ներառական կրթության համակարգը ՀՀ-ում

Համաձայն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից ներկայցված տվյալների՝ հաշմանդամություն ունեցող անձանց 80%-ը ապրում է զարգացող երկրներում: Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են բնակչության 6,2% (Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում թվերը կփոփոխվեն), ինչը բավական մեծ թիվ է 3 միլիոն բնակչություն ունեցող պետության համար: Անկախացումից ի վեր Հայաստանը մի շարք քայլեր է իրականացրել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական իրավունքների պաշտպանության իրավական հիմքեր ձևավորելու հարցում: Հաշմանդամության վերաբերյալ համաշխարհային մակարդակով տարվող քաղաքականության ազգայնացման ուղղությամբ մի շարք օրակարգային պահանջներ են դրվել:[1]

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է Հայաստանի Սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, որն ընդունվել է 1999 թվականին, «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով: Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին

[1] https://erit.am/documents/pdf/ee670e6531b8e1fc6783416f306ff0ba.pdf

հանրակրթական դպրոցներում իրականացնելու ներառական կրթության ծրագրեր։

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար։ Ներառական կրթության ծրագիրն այսօր իրականացման փուլում է։ Ներառական կրթության զարգացմանը զուգահեռ հանրապետությունում նվազում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը։ 2002 թ. հանրապետությունում գործում էին 52 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում էր շուրջ 10.000 երեխա։ Այսօր հանրապետությունում գործում են 23 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում է շուրջ 2300 սովորող։ Ե՛վ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից, և՛ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը։

Համաձայն ՀՀ կառավարության 25.08.2005 թ. N1365-Ն որոշման՝ հանրակրթական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ֆինանսավորվում է բարձրացված չափաքանակով։ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439 որոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական մեկ ընդհանուր չափորոշիչ բոլոր սովորողների համար։ Ըստ այդ փաստաթղթի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով հանրակրթության ծրագրի բովանդակությունը հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին։ 2011 թվականից ՀՀ կառավարության հունվարի 27-ի N 46-Ն որոշմամբ «Հույսի կամուրջ» ՀԿ-ի և դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության հետ համատեղ Տավուշի մարզում իրականացվում է հանրակրթության համակարգում համընդհանուր ներառման ծրագիր, և ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը։

Ներառական կրթության հարցերում կարևորվում է ընտանիքի բացառիկ դերը, ուստի պետությունը գործուն միջոցներ պետք է ձեռնարկի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և հատկապես գիշերօթիկային ռեժիմով աշխատող հաստատություններում սոցիալական

դրդապատճառներով հայտնված երեխաներին ընտանիք և հանրակրթական դպրոց վերադարձնելու համար: Ներառական կրթության և պարտադիր ուսուցման ապահովման գործում դպրոցը պետք է սերտորեն համագործակցի ծնողների, մարզային և համայնքային համապատասխան սոցիալական, կրթական և առողջապահական մարմինների հետ:

Այսպիսով, ՀՀ-ում ներառական կրթության փաստացի իրականացման 21 տարիների ընթացքում ՆԿ ծրագիրը մի դպրոցի կողմից սկզբնավորված նախաձեռնությունից զարգացել է մինչև համընդհանուր ներառականության հավակնություններ ունեցող օրենսդրական նախագիծ: Այս 21 տարիների ընթացքում արձանագրվել են մի շարք ձեռքբերումներ, նվաճումներ, խնդիրներ և մարտահրավերներ, որոնց մի մասը քննարկվել և իր անդրադարձն է գտել հանրակրթության օրենքի փոփոխման նախագծում, մյուս մասը՝ շարունակում է մնալ դպրոցներում: Ներառական կրթության ներմուծումը հանրակրթական դպրոցներ մեծ փոփոխության է ենթարկում նաև մանկավարժի աշխատանքը:[2]

1.2 Բազմամասնագիտական թիմը և նրա գործառույթները

Բազմամասնագիտական թիմը բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում: Թիմը կազմված է մասնագետներից, ընտանիքի անդամներից, իսկ հարկ եղած դեպքում թիմին միանում է նաև երեխան: Թիմի գործողությունները կարող են տարբեր լինել՝ երեխայի գնահատումից մինչև նրա անհատական ծրագրի քննարկում կամ երեխային հաջողությամբ օժանդակելու համատեղ աշխատանքի պլանավորում:[3]

Բազմամասնագիտական թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, և մշակում է երեխայի ուսուցման անհատական պլանը՝

[2]Պապոյան Աննա, Ներառական կրթությամբ երեխաների հոգեբանական աղապտացիան, էջ 210;
[3]Ներառական կրթության ռազմավարություն, Դասագիրք, 2019, էջ 24:

ուղղված կարիքի բավարարմանը:[4]

Բազմամասնագիտական թիմի հիմնական անդամների դերերն ու պարտականությունները `

Թիմի համակարգողը պատասխանատու է թիմային հանդիպումների կազմակերպման համար, օրինակ.

● որոշում է հանդիպումների օրը, ժամը և վայրը,

● որոշում է, թե ովքեր են լինելու հիմնական կազմում և հրավիրում է հանդիպման,

● ծնողներին հրավիրում է հանդիպման,

● նախագահում է ժողովը կամ նշանակում է նախագահի այլ թեկնածուի,

●խրախուսում է թիմի անդամներինª ակտիվորեն մասնակցելու հանդիպմանը,

●ապահովում է, որ յուրաքանչյուր ոք իմանա թիմի կատարած առաջարկությունների, դրանց կատարման պատասխանատուի, և անհրաժեշտ ռեսուրսների մասին,

●դպրոցական համայնքին տեղեկացնում է թիմի բոլոր անդամների աջակցության մասին,

●ապահովում է է ռեսուրսների հատկացումները՝ ելնելով վերհանված կարիքներից։

Ուսուցիչները և հատուկ մանկավարժները պետք է ներառական դասարաններում միմյանց միջև կիսեն և հավասար պատասխանատվություն ունենան դասարանի բոլոր երեխաների համար։ Դասարանում ուսուցչի դերը հիմնականում առարկայի ուսուցումն է։ Սակայն համատեղ աշխատող թիմում հանրակրթության ուսուցչի դերն ընդլայնվում է՝ ներառելով.

●առաջնային գնահատումը,

●մասնակցությունը անհատական ուսուցման պլանի մշակմանը (օգնում է մշակել, վերանայել և փոփոխություններ կատարել),

●օգնություն՝աշակերտին անհրաժեշտ միջամտությունները և ռազմավարութ-յունները որոշելիս,

● օգնություն կրթական ծրագրի փոփոխությունները իրականացնելիս,

●դպրոցական անձնակազմի աջակցության կարիքների վերհանում՝ հանրակրթության ծրագրում աշակերտի առաջընթացին նպաստելու համար.

---

[4] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, 2013, էջ 23:

●դպրոցի և ընտանիքի միջև կապի պահպանում: Ուսուցիչը ծնողներին պարբերաբար տեղեկացնում է աշակերտի ուսումնական առաջադիմության մասին, հայտնում է գնահատականները և ներկայացնում է կրթական ծրագիրը:

Հատուկ մանկավարժի դերը ուսումնական ծրագրի անհատականացումն ու ձևափոխումն է: Որպես բազմամասնագիտական թիմի անդամ՝ հատուկ մանկավարժը կարող է առաջարկություններ կատարել ուսուցման ձևերը բազմազանեցնելու, լրացուցիչ ռեսուրսներ և այլընտրանքային մոտեցումներ կիրառելու վերաբերյալ: Հատուկ մանկավարժի պարտականություններից են՝

●աշակերտի ուսուցման պլանավորման և գնահատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

● խորհրդատվություն ուսուցչին (համատեղ դասավանդում),

● մասնակցություն գիտելիքների գնահատմանը,

● խորհրդատվություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին ամբողջ ուսումնական գործընթացում, այդ թվում՝ արտադասարանական միջոցառումներում ներառելու վերաբերյալ: Հատուկ մանկավարժներն ու ուսուցիչները ծնողներին և աշակերտներին կարող են օգնել հետևյալ ձևերով՝

●ծնողներից հնարավորինս շատ տեղեկատվություն ստանալ աշակերտի մասին,

●տեղեկացնել ծնողներին երեխայի առանձնահատկությունների, նրա պաշտպանության, ԱՈՒՊ-ի կազմման գործընթացում ներգրավվելու նրանց իրավունքի և որպես թիմի անդամներ նրանց դերի մասին,

●օգնել ծնողներին ԱՈՒՊ-ի կազմման գործընթացը պլանավորելիս՝ ապահովելով, որ նրանց մտքերը, անհանգստություններն ու կարծիքներն արտահայտվեն և լսելի լինեն,

●ծնողներին տրամադրել երեխայի հետ տանը աշխատելու վերաբերյալ առաջարկություններ,

●օգնել աշակերտին և նրա ծնողներին՝ պլանավորելու աշակերտի ապագան դպրոցն ավարտելուց հետո,

●հանդես գալ որպես աշակերտի պաշտպան, այսինքն՝ ներկայացնել նրա շահերը, նախապատվությունները և աշակերտի կամ ծնողների իրավունքները,

●ապահովել, որ աշակերտները ակտիվորեն մասնակիցնեն կրթական գործընթացներին, ձեռք բերեն ինքնորոշման հմտություններ, կարողանան սահմանել իրենց նպատակներն ու խնդիրները: Դպրոցի հոգեբան Ստանձնում է հետևյալ պարտականությունները՝

●երեխայի կրթական կարիքների գնահատում,

●գնահատման տվյալների վերլուծություն և մեկնաբանություն ընտանիքների և թիմի անդամների համար,

●մասնակցություն ուսումնական ծրագրերի փոփոխությունների և աշակերտների կրթական կարիքներին համապատասխան միջամտությունների անհրաժեշտության վերաբերյալ քննարկումներին,

●շարունակական դիտարկումների իրականացում՝ ուսումնական ծրագրերի փոփոխման նպատակահարմարությունը և միջամտությունների արդյունավետությունը որոշելու համար: [5]

Լոգոպեդը թիմային աշխատանքներին մասնակցում է հետևյալ ուղղություններով.

●անցկացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանրակրկիտ գնահատում,

● համագործակցում է ընտանիքի և թիմի այլ անդամների հետ,

●մասնակցում է աշակերտի հատկորոշված կրթական կարիքներին համապատասխան ծրագրերի փոփոխման և միջամտությունների պլանավորման գործընթացին,

● իրականացնում է մասնագիտական միջամտություններ (օրինակ՝ զարգացնում է հաղորդակցման հմտությունները, օգնում հաղթահարելու ընթերցանության և գրելու դժվարությունները),

● իրականացնում է շարունակական դիտարկումներ՝ ուսումնական ծրագրերի փոփոխման նպատակահարմարությունը և միջամտությունների արդյունավե-տությունը որոշելու համար:

Սոցիալական աշխատողը/մանկավարժը թիմային աշխատանքին մասնակցում է հետևյալ ուղղություններով՝

● մասնակցում է երեխայի կրթական կարիքի գնահատմանը,

[5]https://www.unicef.org/

● համագործակցում է ընտանիքի և թիմի այլ անդամների հետ,

● կազմակերպում է տնայցեր,

●համագործակցում է դպրոցից դուրս գործող աջակցող կազմակերպությունների հետ։

Էրգոթերապիստը թիմային աշխատանքներին մասնակցում է հետևյալ ուղղություններով.

● անցկացնում է մասնագիտական գնահատում,

● ուսուցիչների հետ կիսում է երեխային ուսումնական միջավայրում օժանդակելուն ուղղված իր գաղափարները։ Աշխատում է երեխայի ձեռագրի վրա, զարգացնում նրա մանր շարժողական հմտությունները՝ նպաստելով երեխայի գրավոր առաջադրանքների հաջող կատարմանը, դասարանում ինքնուրույնության դրսևորմանը,

●աշակերտի՝ դասապրոցեսին մասնակցությունը ապահովելու նպատակով աշխատում է ուսուցչի հետ՝ դասասենյակում անհրաժեշտ փոփոխություններ մտցնելով, ուսումնական նյութերը աշակերտի կրթական կարիքներին համապատասխանեցնելով,

●ընտանիքի անդամներին փոխանցում է տանը երեխային լավագույնս օժանդակելու գաղափարներ։ [6]

Բազմամասնագիտական թիմի գործունեության հիմնական ձևը թիմային աշխատանքն է։ Արդյունավետ թիմային աշխատանքը պահանջում է ոչ թե սոսկ հանդիպումների, քննարկումների անցկացումը, այլև համայնքային ոգու սերմանում, երեխայի նկատմամբ ընդհանուր պարտականությունների հանձնառություն։ Նման թիմային աշխատանքի ժամանակ բոլորն ունենում են լսված ու արժևորված լինելու զգացողություն։ Թիմի անդամների շրջանում համայնքային ոգի ստեղծելու համար պահանջվում է ուշադրություն այն միջավայրի նկատմամբ, որտեղ տեղի են ունենում հանդիպումները (օրինակ՝ սենյակի հարմարավետությունը ծնողների համար), մարդկանց ընդունված լինելու զգացումը։ Առանձնապես կարևոր է, որ ծնողներն իրենց անկաշկանդ զգան, քանի որ ընտանիքների ներկայությունը ողջունելի է թիմում. ծնողները պետք է իմանան, որ գաղափարների փոխանակումը արժեքավոր

[6] Ներառական կրթության ռազմավարություն, Դասագիրք, 2019, էջ 27:

նշանակություն ունի գործընթացի համար, որ իրենց պետք է լսեն ու միաժամանակ իրենք պետք է լսեն:

Բազմամասնագիտական թիմն օգնում է, աջակցող, օգնող ֆունկցիա ունի: Հիմնական դերակատարումը միշտ մնում է հիմնական մանկավարժներին, առարկայական ուսուցիչներին և ընդհանրապես դպրոցի հիմնական աշխատակազմին, որը բաղկացած է առարկայական ուսուցիչներից: Բազմամասնագիտական թիմը նաև պետք է սերտորեն համագործակցի առարկայական ուսուցիչների հետ, որովհետև այն առաջադրանքը, որ պետք է կատարի երեխան լրացուցիչ պարապմունքների ընթացքում, պետք է բխի այդ երեխայի դասարանի հիմնական ուսումնական պլանից: Առանց համագործակցության ուղղակի աշխատանքը չի ստացվի, չի կարող լոգոպեդը մի բան անել, մայրենիի ուսուցիչը՝ մեկ այլ բան: Նրանք պետք է շատ խիստ, համագործակցված աշխատեն:

Որպեսզի երեխան ուսումնական ծրագիրը հաղթահարի, պետք է անընդհատ գտնվի դասարանում: Կարծում եմ՝ մեր ներառական կրթության կազմակերպման կարգը հաջողված է և մեծ փոփոխությունների կարիք չունի, եթե նույնիսկ մենք անցնում ենք տոտալ ներառման: Համաձայն գործող կարգի՝ 80% ժամանակահատվածը երեխան պետք է լինի հիմնական դասարանում: Ուսուցիչը պետք է կարողանա իր դասը այնպես պլանավորել, ծրագրել, որ բոլոր երեխաներին հետաքրքիր լինի, դասը լինի մասնակցային, այսինքն՝ ո՛չ կենտրոնանա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վրա, ո՛չ էլ կենտրոնանա կարիք չունեցող երեխաների վրա, և բոլոր երեխաները մասնակցեն դասապրոցեսին: Ուսուցման ակտիվ մեթոդներից այդ առումով շատ հարմար են խմբային մեթոդը, քննարկային մեթոդը, բազում-բազմաթիվ մեթոդներ, ես չեմ ուզում հիմա ուսուցման մեթոդների մեջ խորանալ, որովհետև բոլոր ուսուցիչները լավատեղյակ են, համենայն դեպս, վերապատրաստված են, գիտեն այդ մեթոդների մասին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համար մի քիչ ավելի դժվար է: Եթե երեխան մտավոր խնդիրներ ունի, ուսուցչի համար մի փոքր դժվար է այնպես անել, որ այդ երեխան ձգտի սովորելու: Այսինքն՝ դասը, դասի

պլանը պետք է այնպես կազմել, որ երեխայի հնարավորությունից մեկ-երկու աստիճան բարձր սանդղակ դրվի, որ երեխան հետաքրքրվի, ոչ թե միանգամից մերժի ու ասի՝ չէ՛, ես դա չեմ կարող, ընդհանրապես չեմ հասկանում՝ ինչի՛ մասին է խոսում: Դա էլ կարող է լինել: Այդ առումով մի քիչ դժվարանում է ուսուցչի գործը դասի պլանը կազմելիս:

1.3 Բազմամասնագիտական թիմի և ծնողների համագործակցության ուղիները

Բազմամասնագիտական թիմի ներսում մասնագիտական համագործակցությունն օգնում է ապահովել, որ երեխային և նրա ընտանիքին վերաբերող աշխատանքը լինի համապարփակ՝ ներառելով կրթության ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ կողմերը: Թիմի վերջնական նպատակը աշակերտին և ընտանիքին մատուցվող ծառայության բարելավումն է: Աշակերտների կրթական կարիքը գնահատող մասնագետները հավաքում են երեխայի վերաբերյալ տեղեկատվություն աշակերտների ուժեղ կողմերի, մարտահրավերների և կարիքների մասին՝ թիմին փոխանցելով.

●անհրաժեշտ բժշկական տվյալները, աշակերտի առաջադիմության փաստաթղթերը և այլն,

●պաշտոնական գնահատման արդյունքները,

●ոչ պաշտոնական գնահատման արդյունքները, օրինակ՝ դասարանական աշխատանքի նմուշներ և սոցիալական վարքի դիտարկումներ, ընտանիքի կողմից տրամադրված տեղեկատվություն,

●սկզբնական տվյալներ՝ ԱՈՒՊ-ը մշակելու և հետագա կրթության արդյունավետությունը գնահատելու համար:

Թիմը որոշում է աշակերտի համար մասնագիտացված ծառայությունների անհրաժեշտությունը, կազմում է անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ) և պարբերաբար, հընթացս քննարկում է երեխայի կարիքները:

Բազմամասնագիտական թիմի անդամ է ծնողը: Հատկապես կարևորվում է ծնողների հետ բազմամասնագիտականի թիմի աշխատանքը տարրական դպրոցում:

Միշտ պետք է ծնողին հարցնել, թե երեխան ինչո՛վ է հետաքրքրվում, ինչպե՛ս կարելի է շարժել նրա հետաքրքրությունը: Եթե երեխան սիրում է միրգ, մրգի միջոցով կարելի է թվաբանական գործողություններ երեխային առաջարկել: Շատ զարմանալի հետազոտություն էմտավոր խնդիրներ ունեցող երեխաները շատ հեշտ են սովորում փողով հաշվել, ընդ որում՝ պարտադիր չէ, որ նրանք այդ դրամը ճանաչեն թվային, նրանք ճանաչում են գույնով: Մեր դրամները գունեղ են, ընդհանրապես աշխարհի բոլոր թղթադրամները որոշակի ներկայացուցչականություն ունեն:

Չկա դպրոցում առարկա, որին չպետք է մասնակցի որևէ աշակերտ: Նույնիսկ ավագ դպրոցի համար մեր մշակած ուսումնական ծրագրերը ըստ բնագավառների են մշակվել, այսինքն՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանությունը համախմբվել են բնագիտություն առարկայախմբի մեջ, և բավականաչափ մատչելի բնագիտական գիտելիքների պահանջ է դրվել մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար:

Բոլոր մարդիկ տարբեր են, բոլոր մարդիկ առանձնահատուկ են, ունեն տարբեր կարիքներ: Ընտանիքում էլ 2-3 երեխա՝ բոլորը տարբեր են, և ծնողները ամեն երեխայի դաստիարակության պարագայում որոշակի հնարքներ են կիրառում:

Այդպես էլ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպումն է: Խելամիտ պայմանները շատ լավ են, ու երբ թիմը իսկապես աշխատում է և ճիշտ է աշխատում, բոլորը նստում են, խելք խելքի են տալիս, թե տվյալ երեխայի համար խելամիտ պայմանը ո՛րն է, ոչ թե սպասում են, որ նախարարությունն ասի՝ այ այսպես պետք է անեք, իսկ նախարարությունում նստած մարդը չի կարող ճանաչել այդ երեխայի բոլոր կարիքները: Մի մեխանիզմը նույն կարիքով երեխաներից մեկի դեպքում աշխատում է, մեկ այլ դեպքում չի աշխատում, որովհետև երեխաներն ունեն տարբեր հետաքրքրությունների շրջանակ: Ամենակարևորը երեխաների հետաքրքրությունների շրջանակն ամրագրելն է: Երեխայի հետագա կրթությունը պետք է կառուցված լինի ոչ թե նրա անկարողությունների, խնդիրների հիմքի վրա, այլ երեխայի հետաքրքրությունների շրջանակի:

Եթե երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ծնողները, որպես կանոն, մտածում են, որ փնտրեն իրենց բնակության վայրին ամենամոտ ներառական կրթություն իրականացնող դպրոց, որպեսզի երեխային

տանեն այդ դպրոցը: Մի կողմից՝ այդ ընտրությունը, իհարկե, խելամիտ է, բայց մյուս կողմից՝ շատ հաճախ նույն ընտանիքի այլ երեխաները գնում են իրենց բնակության վայրի ամենամոտ դպրոցը, որը թերևս այսօրվա ընկալումով ներառական դպրոցի կարգավիճակ կամ ճանաչում չունի, և ծնողը ստիպված է լինում այդ երեխային, որքան էլ համեմատաբար մոտ, բայց այլ դպրոց տանել:

Մի կողմից՝ լավ է, որովհետև ներառական կրթություն իրականացնող դպրոցում այս կամ այն չափով պատրաստ են կազմակերպելու տարբեր կարիքներ ունեցող երեխաների կրթությունը, առկա են աջակցության ծառայությունները, և, հաշվի առնելով նաև ծնողի շատ մտահոգություններ, ընտրում են ներառական կրթություն իրականացնող այդ դպրոցը:

Երեխայի համար ծնողը դպրոց ընտրելիս պետք է նաև հաշվի առնի՝ իսկ ո՛ր դպրոցն են հաճախում իր մյուս երեխաները, որովհետև ներառական կրթությունը ոչ մի ավելի կամ նոր բան չի բերել կրթության համակարգ, բացի այն, որ անընդհատ կրկնում ենք երեխայակենտրոն կրթություն, երեխայի համար ստեղծված լավ հնարավորություն և յուրաքանչյուր երեխայի՝ ըստ իր կարողությունների, առավելագույն ներուժի չափով կրթություն: Իմ խորին համոզմամբ՝ յուրաքանչյուր դպրոցում այս ներուժը կա:

Երբ երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, հասկանալի է, որ ծնողը շատ ավելի մասնակցության անհրաժեշտություն ու պատասխանատվություն ունի կրթության գործընթացում, քան այն ծնողները, որոնց երեխաները չունեն այդ կարիքը, և կամ այդ ծնողի մյուս երեխաները չունեն այդ կարիքը: Ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացում սկսվում է հենց իրենց ընտանիքից և հենց իրենց համայնքում ու դպրոցում: Շատ հաճախ երեխաների կրթությունը տուժում է այն պատճառով, որ ընտանիքում ակնկալիքները երեխայից կրթության, ձեռքբերումների ու արդյունքների առումով շատ ցածր են, եթե ոչ իսպառ բացակայում են: Սա հաճախ կրկնվող երևույթ է: Յուրաքանչյուր ծնող, անկախ իր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի աստիճանից, պետք է հավատա, որ կրթության դրական ազդեցությունը իր երեխայի զարգացման պրոցեսում ոչնչով տարբեր չէ, քան իր մյուս երեխաների համար: Երբ երեխան արդեն դպրոցում է, ծնողի կարևոր անելիքն է համագործակցության ուղիներ

գտնել (եթե դրանք չկան դպրոցի կողմից, ապա ինքը պետք է այդ ուղիները գտնի), հնարավորինս համագործակցել երեխայի կրթությունը կազմակերպող ուսուցիչների հետ, որովհետև ինչպես ծնողները, այնպես էլ ուսուցիչները մեր հասարակության այն անդամներն են, ովքեր հաճախ առաջնորդվում են դեռևս գոյություն ունեցող կարծրատիպերով, որ այս երեխաները չեն կարող, մինչդեռ այդ համագործակցությունը իսկապես ծնողին դարձնում է ավելի իրատես իր երեխայի կարողությունների հանդեպ, ուսուցչին դարձնում է ավելի վստահ, որ ինքը կարող է այդ երեխայի կրթությունը կազմակերպել:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում այսօր կազմում են երեխայի անհատական ուսուցման պլանը: Ցավոք, ոչ միշտ է, որ ծնողները բերում են իրենց մասնակցությունը, քանի որ ծնող-ուսուցիչ կապն ու համագործակցությունը թույլ են լինում, ծնողը նույնիսկ հաճախ անտեղյակ է լինում անհատական ուսուցման պլանից, գիտի ընդամենը՝ ինչ-որ նման մի բան կա, բայց ինչ է դա իրենից ներկայացնում՝ տեղյակ չէ: Մասնակցության կարևորագույն ու արժեքավոր բաղադրամասը ծնողի մասնակցությունն է անհատական ուսուցման պլանի կազմման ողջ գործընթացին: Ավելին, կազմվեց անհատական ուսուցման պլանը, ծնողը պետք է մասնակից կողմ լինի այդ պլանի իրականացման գործում, որպեսզի այն չդառնա թուղթ, որպեսզի ուսումնական տարվա ավարտին ծնողը չասի՝ բայց իմ երեխան ոչինչ էլ չսովորեց: Անհատական ուսուցման պլանը շատ ճկուն փաստաթուղթ է, անընդհատ վերանայվում է, և ծնողը կարող է իր մեծագույն ներդրումը բերել:

Անկախ այն բանից՝ կա՞ն ներառական դպրոցներ, թե՞ ոչ, «Կրթության մասին» օրենքով և Սահմանադրությամբ երեխան ունի այդ իրավունքը, և այն կառույցը, որտեղ գտնվում է երեխան, պարտավոր է իրացնել այդ իրավունքը: Ֆորմալ հասկացությունից երբ գնում ենք դեպի բնական պրոցեսներ, պետք է հասկանանք՝ իսկ ո՛րն է այդ իրավունքը: Դպրոցը ընդունել է երեխային, և դրանով կարող է ասել, որ երեխայի իրավունքը պաշտպանված է, երեխան դպրոցում է, բայց երեխան իրավունք ունի նաև կրթության գործընթացում մասնակցելու, որը շատ կարևոր է, միայն դպրոցում լինելը դեռ բավարար չէ: Կան այդպիսի դեպքեր, և քիչ չեն, որ երեխայի ներկայությունը դպրոցում պարզապես ձևական է, և ինչքան էլ ծնողը ջանք է

գործադրում, միևնույն է՝ դպրոցն ունի իր հստակ մեկ պատասխան, որ այդ երեխան չի կարող: Երեխան այլև չի ուզում գալ դպրոց և ո՞ւմ դիմի: Կարծում եմ՝ նախևառաջ այդ երաշխավորը կրթության և գիտության նախարարությունն է: Ծնողը պետք է այդ խնդրով դիմի ԿԳՆ: Եթե դպրոցը Երևան քաղաքում է, նա կարող է այդ խնդրով դիմել նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչություն: Այդ կառույցները պարտավոր են երաշխավորել երեխայի կրթության իրացումը դպրոցներում:

Այն փոփոխությունները, որ կատարվեցին «Հանրակրթության մասին» օրենքում, իսկապես շատ առաջադիմական են, և որով Հայաստանի Հանրապետությունը իսկապես ընդգծվել է որպես առաջադեմ, մեծ քայլ արած երկիր Եվրոպայի շատ երկրների թվում. դա փաստվեց վերջերս Հայաստանում տեղի ունեցած միջազգային հանդիպման ժամանակ, որ շատ երկրներ իսկապես զարմացած էին:

ՀՀ-ն հռչակում է, որ մինչև 2022 թ. մեր բոլոր հանրակրթական դպրոցների կրթության կազմակերպումը կլինի ներառական: Սա նաև լուծում է այն ամենակարևոր հարցը, որ երեխան կարող է գնալ իր բնակության վայրին ամենամոտ դպրոցը, որը ներառական կրթություն է իրականացնում:

Օրենքի հաջորդ կարևորագույն մոտեցումն այն էր, որ այսօր ներառական կրթություն իրականացնող դպրոցներն ունեն աջակցության կարիք, ինչն իրականում դպրոցների համար չկա: Դա ներառական կրթությանն աջակցող եռաստիճան՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներդրումն է, որը լինելու է դպրոցի, մարզի և հանրապետության մակարդակներում: Դպրոցը կունենա հատուկ մանկավարժահոգեբանական համակազմ, ուսուցչի օգնականի հաստիքներ: Մարզային մակարդակում հատուկ դպրոցները կվերակազմակերպվեն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և դպրոցներին կցուցաբերեն մանկավարժահոգեբանական աջակցություն: Դպրոցներին՝ նկատի ունեմ ուսուցիչներին, երեխաներին, ծնողներին և ընդհանրապես համայնքներին: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը կգնահատեն հենց տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում և կվկայագրվեն տվյալ մարզի համապատասխան տարածքային մարմինների կողմից:

Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունը

կհամակարգի հանրապետության բոլոր այդ ծառայությունների աշխատանքը՝ թե՛ դպրոցների, թե՛ տարածքային մակարդակներում:

Ներառական կրթությունը այնպիսի միջավայր պետք է ստեղծի, որ յուրաքանչյուր երեխա իր կարողությունների առավելագույն ներուժով մասնակցի կրթության պրոցեսին: Երբ բազմամասնագիտական թիմը գտնում է, որ պետք է օժանդակել երեխայի ուսումնական ծրագրի դժվարությունների հաղթահարմանը, ապա թիմի բոլոր անդամներով կազմում են անհատական պլան: Բազմամասնագիտական թիմը սերտորեն համագործակցում է առարկայական ուսուցիչների հետ:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը հիմնվում է բնության մեջ, սոցիալական միջավայրում նյութի, էներգիայի, տեղեկատվության, առարկաների փոխակերպման և դրանք մարդուն ծառայեցնելու կոնկրետ գործընթացների տիրապետման վրա: Ուսուցման բովանդակությունը հիմնվում է սովորողների կրթական կարիքների, հետաքրքրությունների, ոչ թե սեռի վրա:

«Տեխնոլոգիայի» ուսուցման գործընթացում հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողին, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին ներկայացվող պահանջները՝ անհատական մոտեցում ցուցաբերելով նրանց առանձնահատկություններին, կարողություններին, հմտություններին և կարիքներին՝ ստեղծելով համապատասխան պայմաններ:

Կարևոր է հիշել

Յուրաքանչյուր երեխա անհատականություն է, և նրա կարիքները տարբեր են: Բոլոր դպրոցներում, այդ թվում՝ ներառական կրթություն իրականացնող, մանկավարժները հանդիպում են դժվարությունների: Բազմամասնագիտական թիմը և մանկավարժները չունեն պատրաստի բաղադրատոմսեր բոլոր երեխաների համար:

Ձեր երեխային ամենալավը դուք եք ճանաչում և ամենակարևոր մարդն եք երեխայի կրթության կազմակերպումն արդյունավետ իրականացնելու համար: Հաջողությունների հասնելու համար պետք է ակտիվ համագործակցել մանկավարժների և ամբողջ թիմի հետ:

Երեխայի կրթության իրականացման պատասխանատուն միայն դուք չեք. ընդգրկե՛ք նաև ընտանիքի մյուս անդամներին, որպեսզի բոլորը ինչ-որ չափով մասնակցեն երեխայի կրթության կազմակերպման գործին:

Կրթությունը չի սկսվում և ավարտվում գիտելիքով, և ամենևին պարտադիր չէ, որ ձեր երեխան մյուսների նման սովորի, բոլորի նման գրիչ օգտագործի, կարդա և այլն: Դպրոցը սակայն միայն սոցիալականացման և որոշ ծառայություններ ստանալու վայր չէ: Երբեք մի՛ թերագնահատեք նրա կարողությունները որպես աշակերտի, կենտրոնացե՛ք նրա ուժեղ կողմերի վրա, հավատացե՛ք նրա ուժերին և օգնե՛ք, որ նրան բացահայտեն նաև ուսուցիչներն ու դասընկերները:

Պետք է աշխատել դպրոցում երեխայի նկատմամբ դրական վերաբերմունք ստեղծելու, նրա կարիքների մասին ճիշտ պատկերացում ձևավորելու ուղղությամբ: Դրա համար օգտագործե՛ք բոլոր ոչ ֆորմալ միջոցները, էքսկուրսիաները, հանդիպում-քննարկումները, հյուրասիրությունները կամ տոնակատարությունները ձեր տանը և այլն:

Դուք մենակ չեք, բազմաթիվ ծնողներ են անցել այդ ճանապարհով, և նրանց փորձը, թեկուզ ուրիշ դպրոցում, կարող է օգտակար լինել ձեզ: Գտե՛ք նրանց, այցելե՛ք հասարակական կազմակերպություններ, որտեղ հանդիպում են նրանք, և կիսվեք ձեր խնդիրներով և փորձով:

Եթե ծնողն ընտրում է համայնքին մոտ, բայց ներառական կրթություն չիրականացնող դպրոցը, որը պատրաստ է ընդունելու հաշմանդամություն ունեցող երեխային, ապա առաջին հերթին պետք է լավ վերաբերմունք ակնկալի: Ծնողը նաև կարող է համայնքում երեխայի կարիքները հոգալու համար տրվող ծառայությունների ակնկալիք ունենալ: Նա միշտ կարող է երեխայի կրթության կազմակերպման գործում ակնկալել բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի աջակցությունը:

Եզրակացություն

Այսպիսով, ներառական կրթության հարցերում կարևորվում է ընտանիքի բացառիկ դերը, ուստի պետությունը գործուն միջոցներ պետք է ձեռնարկի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և հատկապես գիշերօթիկային ռեժիմով աշխատող հաստատություններում սոցիալական դրդապատճառներով հայտնված երեխաներին ընտանիք և հանրակրթական դպրոց վերադարձնելու համար: Ներառական կրթության և պարտադիր ուսուցման ապահովման գործում դպրոցը պետք է սերտորեն համագործակցի ծնողների, մարզային և համայնքային համապատասխան սոցիալական, կրթական և առողջապահական մարմինների հետ:

Համագործակցել երեխայի ծնողների հետ, անհրաժեշտության դեպքում խթանել վերջիններիս մասնակցությունը կատարվող աշխատանքին, զարգացնել ծնողների՝ երեխայի հետ տանը ճիշտ աշխատելու ունակությունները:

Անհրաժեշտության և/կամ երեխայի հաճախակի բացակայությունների դեպքում սոցիալական աշխատողի հետ կատարել տնայցեր:

Սերտորեն աշխատել բազմամասնագիտական թիմի հետ, փոխանակել մասնագիտական հմտություններ, միասին քննարկել յուրաքանչյուր երեխային անհրաժեշտ անհատական մոտեցումները, մյուս մասնագետներին տրամադրել մասնագիտական խորհրդատվություն:

Ներառական կրթությունը այնպիսի միջավայր պետք է ստեղծի, որ յուրաքանչյուր երեխա իր կարողությունների առավելագույն ներուժով մասնակցի կրթության պրոցեսին: Երբ բազմամասնագիտական թիմը գտնում է, որ պետք է օժանդակել երեխայի ուսումնական ծրագրի դժվարությունների հաղթահարմանը, ապա թիմի բոլոր անդամներով կազմում են անհատական պլան: Բազմամասնագիտական թիմը սերտորեն համագործակցում է առարկայական ուսուցիչների հետ:

Գրականության ցանկ

1. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, 2013;
2. Ազարյան Ռ.Ն., Ավագյան Ա.Վ., Հատուկ մանկավարժություն, Դասագիրք մանկավարժական բուհերի ուսանողների համար, Երևան 2016;
3. Պապոյան Աննա, Ներառական կրթությամբ երեխաների հոգեբանական աղապտացիան, էջ 210-216:
4. Ղազումյան Բելա, Ներառական կրթության կազմակերպման իրավական և կրթական խնդիրները, Ընտանիք և դպրոց, 2.2016թ., գիտամեթոդական հանդես, , էջ 22;
5. Ներառական կրթության ռազմավարություն, Դասագիրք, 2019:
6. https://armenia.savethechildren.net
7. https://forum.armedu.am/
8. https://liliakhechikyan.wordpress.com/
9. https://erit.am/documents/pdf/ee670e6531b8e1fc6783416f306ff0ba.pdf